

26.04.2009թ.


ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ կառավարման մարմինների

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2009թ.-ի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:


Խորհրդի նախագահ՝ Հենրիկ Զախարյանց


(ստորագրություն)



Խորհրդի անդամ,
Տնօրեն՝ Շահեն Ստեփանյան


(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Փոխտնօրեն՝ Հովիկ Զախարյանց


(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Գլխավոր հաշվապահ՝ Արթուր Մարտիրոսյան


(ստորագրություն)



«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ
կառավարման մարմինների 2009թ.-ի տարեկան զեկույց

Իրավաբանական հասցե՝ ՀՀ ք. Կապան Բաղաբերդ քաղ. շենք 2^Ա բն. 2
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Աերացիա 1
Հեռախոս՝ (374-10) 467410
Ֆաքս՝ (374-10) 467400
Էլ. փոստ՝ valletta@valletta.am
Ինտերնետային կայք՝ www.valletta.am

Բովանդակություն

1. Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը..	3
1.1 Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ.....	3
1.2 Ռիսկային գործոններ.....	3
1.3 Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ.....	3
1.4 Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները.....	4
1.5 Ընկերության կառավարման մարմինները.....	6
2. Կարևոր դեպքերի նկարագիրը.....	9
3. Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը.....	9

1. Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը

1.1 Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ

«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Թողարկող/ հիմնադրվել է 11.12.2003թ.-ին և գրանցվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կապանի տ/ք-ում 12.12.2003թ.-ին: Թողարկողի գրանցման (իրավաբանական) հասցեն է՝ ՀՀ, ք. Կապան, Բաղաբերդ 2ա, բն. 2, իսկ գործունեության իրականացման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Աերացիա 1:

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 1 600 000 000 դրամ, որը կազմված է 1 600 000 000 դրամ անվանական արժեքով 1 բաժնեմասից:

Թողարկողի կողմից իրականացվել է պարտատոմսերի երեք թողարկում, ընդհանուր 1 350 000 000 դրամ ծավալով, որից 850 000 000 դրամը մարվել է 2009թ. փետրվարի 2-ին և 2009թ. Դեկտեմբերի 30-ին: Թողարկողի պարտատոմսերը ցուցակցած են և շրջանառվում են «ՆԱՍԴ-ԱԲ Օ ԷՄ ԷԲՍ Արմենիա» ԲԲԸ-ում Bbond հարթակում:

1.2 Ռիսկային գործոններ

Թողարկողը իր գործունեության ընթացքում առնչվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից կարելի է առանձնացնել առավել կարևորները.

Շուկայական ռիսկ. Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանման հետ, ինչն կարող է ազդել ինչպես երկրի տնտեսության, այնպես էլ թողարկողի եկամուտների վրա: Երկրի տնտեսության անկումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի շահութաբերության վրա: Թողարկողը շուկայական ռիսկի գնահատման և զսպման նպատակով կատարում է երկրի իրական հատվածի մշտական վերլուծություն:

Աճող մրցակցություն. Թողարկողը գործունեություն է ծավալում մրցակցային շուկաներում, որտեղ նմանատիպ ապրանքներ և ծառայություններ են մատուցում բազմաթիվ այլ ընկերություններ: Բացի այդ, չի բացառվում նաև նոր և ավելի հզոր մրցակիցների ի հայտ գալու հավանականությունը: Նշված գործոնները կարող են բացասաբար ազդել Թողարկողի՝ շուկայում ըստ առանձին գործունեության ուղղությունների ունեցած մասնաբաժնի վրա, ինչն իր հերթին էական ազդեցություն կարող է ունենալ Թողարկողի ֆինանսական արդյունքների վրա: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ Թողարկողը վարում է արդյունավետ գնային և մարկետինգային քաղաքականություն, ինչի շնորհիվ շուկայում իր կայուն տեղն է զբաղեցնում:

Աշխարհաքաղաքական ռիսկեր. աշխարհաքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ տրանսպորտային ուղիների և երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի գործունեության մեջ զգալի տեղ է զբաղեցնում ներմուծվող ապրանքների մանրածախ և մեծածախ առևտուրը, վերոնշյալը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի իրացման ծավալի վրա:

Արտարժույթային ռիսկ. Թողարկողի գործառնությունների մեծ մասն իրականացվում է արտարժույթով, հետևաբար արտարժույթային փոխարժեքների զգալի տատանումները կարող են մեծ ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական արդյունքների վրա (ինչպես դրական, այնպես էլ բացասական):

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկը ներքին գործընթացների, մարդկանց և համակարգերի գործունեության անհաջող ընթացքից կամ արտաքին գործոնների ազդեցությունից կորուստներ կրելու հավանականությունն է: Թողարկողը գործառնական ռիսկը կանխարգելելու նպատակով սահմանել է ներքին կանոններ:

1.3 Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Թողարկողը վարում է դիվերսիֆիկացված գործունեություն: Ներկայումս Թողարկողի կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

- մեծածախ և մանրածախ առևտուր,

- կենցաղային տեխնիկայի ներմուծում և վաճառք,
- սուրճի արտադրություն,
- թեյի փաթեթավորում,
- հանրային սնունդ
- արտարժույթի առքուվաճառքի գործունեություն:

2009թ.-ին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով Հայաստանյան բանկերում նկատվեց վարկերի տրամադրման պայմանների խստացում, որն արտահայտվեց հիմնականում տոկոսադրույքների աճով և վարկերի տրամադրման ընթացակարգերի ու գրավի նկատմամբ պահանջների խստացմամբ, ինչն չէր կարող չանդրադառնալ նաև Թողարկողի գործունեության վրա:

Թողարկողի կողմից իրականացվող հիմնական գործունեության ոլորտների զարգացման վերաբերյալ կարելի է ասել, որ ֆինանսատնտեսական անկայուն վիճակի պատճառով դրանք անկում ապրեցին: Ապրանքների ներմուծման համար վերջին ամիսներին անբարենպաստ ազդեցություն ունեցավ նաև ՀՀ դրամի արժեզրկումը: Տնտեսական դժվար պայմանների պատճառով ընկավ նաև սպառողների գնողունակությունը: Ստեղծված անհասկանալի և ծանր պայմանները հաղթահարելու նպատակով Թողարկողը ձեռնամուխ եղավ հակաճգնաժամային քաղաքականության իրականացմանը. կատարվեց աշխատատեղերի օպտիմիզացիա, ինչպես նաև վերանայվեց ներմուծվող ապրանքատեսակների ցանկը: Ներմուծման մասով հիմնական շեշտադրումը դրվեց առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների վրա, այնպիսիք ինչպիսիք են բրինձը, ձավարեղենը, պահածոյացված բանջարեղենը, նրբերշիկը և թռչնամիսը: Թողարկողը հրաժարվեց այնպիսի սննդամթերքների ներմուծումից, որոնք արագ իրացվելի չէին: Կենցաղային տեխնիկայի գծով հիմնական շեշտը դրվել է գազա և էլեկտրա ջրատաքացուցիչների ներմուծման վրա: Ինչ վերաբերվում է սուրճի և թեյի արտադրությանը, ապա այս ոլորտներում ծավալների կրճատումը եղել է շատ չնչին: Թողարկողի կողմից արտադրվող սուրճը ներկայումս արտահանվում է միայն Վրաստան:

Ստորև ներկայացվում է 2008 և 2009թթ. ընթացքում Թողարկողի կողմից արտադրված, ներմուծված ապրանքների և մատուցվող ծառայությունների իրացումից ստացված հասույթի ծավալները դրամական արտահայտությամբ, ինչպես նաև դրանց մասնաբաժինը հասույթի ընդհանուր ծավալում:

		2008թ.		2009թ.	
Մեծածախ առևտուր	Սննդամթերք	2 410 951 000		1 292 467 000	
	Կենցաղային տեխնիկա	329 184 000		232 070 000	
	Արտադրություն	285 022 000		382 910 000	
	<i>Ընդամենը</i>	<i>3 025 157 000</i>	<i>53.7%</i>	<i>1 907 447 000</i>	<i>76.9%</i>
Մանրածախ առևտուր	Սննդամթերք	1 302 524 000		44 609 000	
	Կենցաղային տեխնիկա	709 435 000		341 318 000	
	Արտադրություն	177 843 000		4 751 000	
	<i>Ընդամենը</i>	<i>2 189 802 000</i>	<i>38.9%</i>	<i>390 678 000</i>	<i>15.8%</i>
Ծառայություններ	Հանրային սնունդ	386 123 000		127 981 000	
	Այլ ծառայություններ	31 662 000		54 305 000	
	<i>Ընդամենը</i>	<i>417 785 000</i>	<i>7.4%</i>	<i>182 286 000</i>	<i>7.3%</i>
ԸՆԴԱՄԵՆԸ		5 632 744 000	100%	2 480 411 000	100%

1.4 Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը	2008թ.	2009թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	5 544 646	2 480 411
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	4 215 311	2 006 505

Համախառն շահույթ (վնաս)	1 329 335	473 906
Իրացման ծախսեր	332 505	72 792
Վարչական ծախսեր	293 126	218 604
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	703 704	182 510
Գործառնական այլ եկամուտներ	49 005	289 112
Գործառնական այլ ծախսեր	239 643	424 086
Գործառնական շահույթ (վնաս)	513 066	47 536
Ֆինանսական ծախսեր	607 963	555 269
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	152 074	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	48 143	(394 869)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	105 320	(902 602)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	105 320	(902 602)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	64 078	-
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	41 242	(902 602)

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ

Ցուցանիշի անվանումը	2008թ.	2009թ.
Հիմնական միջոցներ	224 796	98 140
Ոչ նյութական ակտիվներ	5 394	4 501
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	105 221	73 551
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	335 411	176 192
Պաշարներ	858 686	433 401
Տրված ընթացիկ կանխավճարներ	402 232	435 280
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	161 946	690 113
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	184 668	22 840
Այլ դեբիտորական պարտքեր	-	601
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	3 388 002	5 177 289
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	462 273	63 478
Այլ ընթացիկ ակտիվներ	1 735 553	55 977
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	7 193 360	6 878 979
Ընդամենը ակտիվներ	7 528 771	7 055 171
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ զումար	1 600 000	1 600 000
Էմիսիոն եկամուտ	38 000	38 000
Կուտակված շահույթ	41 242	(861 360)
Պահուստային կապիտալ	13 762	13 762
Ընդամենը սեփական կապիտալ	1 693 004	790 402
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	2 770 199	2 844 132
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	2 770 199	2 844 132
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	2 227 335	2 762 152
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	298 649	533 180
Ստացված ընթացիկ կանխավճարներ	490 895	106 128
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	34 058	11 110
Այլ կրեդիտորական պարտքեր	501	791

Այլ ընթացիկ պարտավորություններ	14 130	7 276
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	3 065 568	3 420 637
Ընդամենը պարտավորություններ	5 835 767	6 264 769
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	7 528 771	7 055 171

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2008թ.	2009թ.
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) <i>Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Սեփական կապիտալի միջին մեծություն</i>	2.31%	(1.14)
Ակտիվների շահութաբերություն (ROA) <i>Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Ընդհանուր ակտիվների միջին մեծություն</i>	0.59%	(0.13)
Չուտ շահույթի մարժա (NPM) <i>Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ</i>	0.74%	(0.36)
Կապիտալի համարժեքության գործակից <i>Սեփական կապիտալ/Ընդհանուր ակտիվներ</i>	0.23	0.11
Ֆինանսական կախվածության գործակից <i>Ընդամենը պարտավորություններ/Սեփական կապիտալ</i>	0.77	7.93
Բացարձակ իրացվելության գործակից <i>(Գրանցված միջոցներ և դրանց համարժեքներ+Ընթացիկ ֆինանսական ներդրումներ)/Ընթացիկ պարտավորություններ</i>	1.26	1.53
Ընթացիկ իրացվելության գործակից <i>(Գրանցված միջոցներ և դրանց համարժեքներ+Ընթացիկ ֆինանսական ներդրումներ+Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ)/Ընթացիկ պարտավորություններ</i>	1.5	1.86
Ընդհանուր իրացվելության գործակից <i>Ընթացիկ ակտիվներ/Ընթացիկ պարտավորություններ</i>	2.35	2.01
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից <i>Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ/Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը</i>	56.56	3.59
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով <i>365/(Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ/Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)</i>	6.45	101.67
Պաշարների շրջանառելիության գործակից <i>Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք/Պաշարների միջին արժեքը</i>	4.92	4.63
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով <i>365/(Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք/Պաշարների միջին արժեքը)</i>	74.19	78.83
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից <i>Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք/Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը</i>	17.84	3.76
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով <i>365/(Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք/Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)</i>	20.46	97.07


1.5 Ընկերության կառավարման մարմինները

Թողարկողի կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝

N	Անունը, Ազգանունը և պաշտոնը	Բնակության վայրը	Մասնագիտությունը	Վերջին 3 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոնները
1	Հենրիկ Չախարյանց Տնօրենների խորհրդի նախագահ	ՀՀ, ք. Բյուրեղավան, 16 շ., բն. 9	ինժեներ-նաղիտտեխնիկ	2003թ.-2006թ. նոյեմբեր՝ տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2008թ. հուլիսից առ այսօր՝ տնօրեն («ՆԱՏՖՈՒՂ» ՓԲԸ) 2006թ. առ այսօր՝ տնօրեն («ՍԹԱՐ ԳԼՈՈՒԻ» ՓԲԸ)
2	Շահեն Ստեփանյան Տնօրենների խորհրդի անդամ, Տնօրեն	ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Նոյակերտ	ինժեներ	1996թ.-2006թ. նոյեմբեր՝ փոխտնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2006թ. նոյեմբերից առ այսօր՝ տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)
3	Հովիկ Չախարյանց Տնօրենների խորհրդի անդամ, Փոխտնօրեն	ՀՀ, ք. Բյուրեղավան, 16 շ., բն. 9	ինժեներ-նաղիտեխնոլոգիկ	1995թ.-2008թ. հուլիս՝ մենեջեր («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2008թ. հուլիսից առ այսօր՝ փոխտնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)
	Արթուր Մարտիրոսյան Տնօրենների խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ	ՀՀ, ք. Աբովյան, Մարալանջ 7, բն. 12	նաղիտեխնոլոգիկ, տնտեսագետ	2004-2005թթ.՝ գլխավոր հաշվապահ («ՀԵՆԿ» ՀԿ) 2005-2008 թթ. հուլիս՝ ավագ ատղիտոր («Գրանք Թորմթոն Ամի» ՍՊԸ) 2008թ. հուլիս - առ այսօր՝ գլխավոր հաշվապահ («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)
6	Արա Ստեփանյան ԼՂՀ մասնաճյուղի տնօրեն	ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 17/2-47	ինժեներ-շինարար	2004թ. ապրիլ - առ այսօր՝ մասնաճյուղի տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ ԼՂՀ մասնաճյուղ)

Ստորև ներկայացվում է Ընկերության կառավարման մարմինների և ֆունկցիոնալ ստորաբաժանումների սխեմատիկ կառուցվածքը.



2. Կարևոր դեպքերի նկարագիրը

2009թ.-ի դեկտեմբերին ռազմավարական որոշում կայացվեց վերսկսել արագ սննդի ծառայությունների մատուցումը: 15.12.2009թ.-ից «ՖՈՆՎԵՔՍ ԿՈՄԵՐՑԻԱԼ» ՍՊԸ-ից «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ին փոխանցվեցին Տ.ՍԵժ 12 և Իսահակյան 14 հասցեներում գտնվող ԷՍ-ԷՖ-ՍԻ էքսպրես արագ սննդի կետերը և Տ.ՍԵժ 12 հասցեում գտնվող ՊԼԵՆԵՐ գարեջրատունը:

Կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և ՀՀ դրամի կտրուկ անկման հետ ռազմավարական որոշում կայացվեց 2009թ.-ի առաջին եռամսյակում ժամանակավորապես դադարեցնել ներմուծումը, սակայն ներկայումս Թողարկողը նորից վերականգնել է հարաբերությունները հիմնական մատակարարների հետ և սկսել է ներմուծել ինչպես սննդամթերք, այնպես էլ կենցաղային տեխնիկա: Այս առումով Թողարկողը լիահույս է, որ մինչև տարեվերջ կվերականգնվի ներմուծման նախկին ծավալները:

2009թ.-ի սկզբներին Թողարկողը բանակցային գործընթաց սկսեց ՀՀ տարբեր բանկերի հետ՝ իրեն տրամադրված վարկերի պայմանների վերանայման վերաբերյալ, որը կխթանի որպեսզի Թողարկողը կարողանա հայթայթել ազատ միջոցներ ներմուծում կազմակերպելու համար: 2009թ.-ի առաջին չորս ամիսների ընթացքում Թողարկողը մոտավորապես 2 մլն. ԱՄՆ դոլարի չափով նվազեցրեց իր վարկային պարտավորությունները՝ տարբեր բանկերում ժամկետից շուտ կատարելով մարումներ:

2009թ. օգոստոս ամսին Թողարկողը օտարել է «ԹԱՅՄ ԶԻՐՈՒՄ» ՍՊԸ 98% բաժնեմասից 35.46%-ը: «ԹԱՅՄ ԶԻՐՈՒՄ» ՍՊԸ (հասցեն՝ ՀՀ, ք. Կապան, Հ. Ավետիսյան 24, բն. 3, գրանցման համար՝ 27.110.01160) տնօրենն է Վ. Հովհաննիսյանը:

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց և «ԹԱՅՄ ԶԻՐՈՒՄ» ՍՊԸ կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապ առկա չէ:

2009թ.-ի ընթացքում տեղի ունեցած այլ կարևոր դեպքերի վերաբերյալ Թողարկողի կողմից ՀՀ ԿԲ և «ՆԱՍՎԱՔՕ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ են ներկայացվել են էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթեր: Նշված ժամանակաշրջանում ներկայացվել են նաև 2008թ.-ի տարեկան, 2009թ.-ի առաջին, երկրորդ, և երրորդ եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները: Նշված բոլոր հաշվետվությունները և լրացումը գետեղված են Թողարկողի (www.valletta.am), «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (www.armswissbank.am) և ՀՀ ԿԲ (www.cba.am) և Բորսայի (www.nasdaqomx.am) կայքերում:

3. Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Հաշվի առնելով տնտեսության զարգացման տեմպերի ոչ բարենպաստ կանխատեսումները մոտակա 1-2 տարվա համար, ընկերության գործունեությունը ակնկալվում է իրականացնել առավել կոնսերվատիվ (պահպանողական) քաղաքականության համաձայն, ձեռնպահ մնալով նոր և առավել ռիսկային ծրագրերի իրագործումից:

Հայտնի է, որ ընկերության գործունեության հիմնական մասը կազմում է պարենային ապրանքների ներմուծումը և մեծածախ իրացումը, որոնց զգայունությունը գնողունակ պահանջարկի անկման նկատմամբ նվազագույնն է: Այդ առումով ընկերության գործունեության ոլորտներում էական փոփոխություններ չեն ակնկալվում:

Տվյալ ժամանակահատվածում ընկերությունը շեշտը դնելու է հետևյալ ռազմավարական խնդիրների լուծմանը՝

- կառավարման որակի բարելավում, ներառյալ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, ներքին հսկողության և կառավարչական հաշվետվությունների համակարգի բարելավումը.
- ծախսերի օպտիմիզացիա, որոնց շնորհիվ ընկերությունը կնվազեցնի վաճառվող ապրանքների/արտադրանքի ինքնարժեքը և վերադարձի ծախսերը, միաժամանակ բարձրացնելով շահութաբերության մակարդակը: Տվյալ ուղղությամբ հնարավոր գործողություններից են գնումների կենտրոնացված համակարգի ներդրումը, աշխատանքի վարձատրության համակարգի վերանայումը, կապելով այն կոնկրետ աշխատակցի և/կամ ընկերության ֆինանսական արդյունքներից, որոշակի ծախսերի կրճատումը.
- նոր մատակարարների և ապրանքատեսակների բացահայտումը, որի շնորհիվ հնարավոր կլինի առավել մրցունակ գներով ներմուծել ապրանքները և պահպանել հասույթների և

շահութաբերության անհրաժեշտ մակարդակը: Միաժամանակ նախապատվությունը տրվելու է առավել իրացվելի ապրանքների ներմուծմանը.

- իրացման ցանցի ընդլայնումը, ի հաշիվ ըներության հետ առ այսօր չհամագործակցող մեծածախ և մանրածախ ընկերությունների հետ համագործակցության, այդ թվում նաև մարզերում: